խանին, որ առ մեզ և առ ազգս մեր, ահա երեք ամ է, որ մեք ընդ ինքեան, ի մէջ զօրացն շրջիմք յամենայն ուրեք։

Առին զբաղում քաղաքս մինչև ի Թունայ[8] գետն մեծ և յայս անցեալ դեկտեմբերի 11, մեծաւ պաշարմամբ և սաստիկ արիւնահեղութեամբ ի մէջ հինգ ժամու առին զԻսմայիլ քաղաքն և զամենայն թուրքս ի սուր մաշեցին, անձինս ԼԲՌ (32 000) և զմնացեալսն գերեցին և զքաղաքն աւար առին։ Ընդ պաշարմանն և զազգս մեր կողոպտեցին զապօռօս կոչեցեալ ղազախքն[9]։

Մեք գնացեալ ի Քիլի և Իսմայէլ, սփոփեցաք զնոսա, զգերիսն ժողովեցաք և ամե[նե]ցուն հացի և հանդերձի բաւականութիւն ետուք՝ ըստ կարի մերում և յամենայն վիճակէ իմմէ։ Կարեկցութիւն խնդրեցաք վասն թշուառութեան նոցա, և ի յա[յ]սմ փետրուարին ընդ մեծ իշխանին եկաք ի Պետրբուրգ առ թագուհին[10] վասն տառապանաց ժողովրդեան մերոյ օգնութեան և այլ հարկաւորութեան ազգին մերոյ առ հասարակ, որ հասարակ հրովարտակ խնդրեմ վասն ազգին մերոյ ապ[ա]հովութեան։ Յոյս մեծ ունիմ, որ շնորհեսցէ, յայնժամ երջանիկ լինելոց են ազգ մեր ի յերկրի աստ։

Ապա յայսմ միջոցի տրտմութիւն իմն հանդիպեցաւ մեզ, որ աղայ Յովհաննիսի միակ որդի աղայ Յարութիւնն 22 ամեայ, յայսմ յունվարի 12 առ Տէր փոխեցաւ։ Տրտմալի սրտիւ զքեզ ողջունէ և խնդրէ զներումն, որ պատասխան թղթոյ քոյ ոչ կարաց գրել ի թախծութենէ հոգւոյ իւրոյ։

Երկու հազար թումա[ն][11] հանգուցեալ Գրիգոր Խալդարեանի[12] տպարանն առի և տարեալ հաստատեցի ի Նախիջևան՝ ի Նորաշէն սուրբ Խաչ վանքն իմ, ընդ նմին և մեծ դպրոցք շինեցի և շինեմ, որ զորս մանկունս ազգիս մերոյ ընկալայց ի նոսա։ Տացից ուսումն ամենայն երեք լեզուաւ։ Լինի թէ սոքա ի ժամանակի իւրեանց, իմաստութեամբ իւրեանց կարիցէն օգնել սիրելի հայրենեացն մերոց։ Որոյ յաղագս ի Հնդիկս առաքեցի տէր Ստեփան աւագ քահանայն մեր՝ օգնութիւն հայցել մեզ։ Աստուած լի արասցէ զժողովուրդսն Սուրաթու և Մադրասու։ Եւ ես աղայ Յօհանջանն Գէրաքեան, որ կարեկից եղեն ինձ առատ տրօք ի պատիւ ազգին, և ես ի պատիւ աղայ Յօհանջանին երկու դպրոց ի քաղաքին հաստատեցի յանուն նորա, և ի յԻսմայէլու զհիսուն որբ մանկունս ընկալայ ի ս[ո]ակի նորա անդ ուսանիլ և լինիլ յաւիտեան յիշատակ տանն Գէրաքեան[13]։

Եւ զբոլոր տպարանն ու զդպրոցն նուիրեցի լինիլ յիշատակ Հնդկաց երկրի ժողովրդեանն մերոյ։ Ըստ որում դոքա միայն գտան լցեալ բարի նախանձիւք ի պատիւ ազգին։ Զգովելի գործս դոցա ծանուցի իշխանին մեծի։ Յոյժ գոհունակ եղև։ Յուսամ, զի տէր Ստեփանն եկեալ իցէ յայդր և լուեալ իցես ի նմանէ վասն ամենից։ Մինչև ցելն շնչոյս պատրաստ եմ ծառայել սիրելի ազգին իմոյ և յուսամ, որ պտուղ աշխատանաց իմոց վայելեսցէն ի ժամանակի։

Յանցեալ հոկտեմբերի 5 գրեցի յայդր հասարակ կոնդակ և յատուկ թուղթ առ գերապատուելի Խաչիկ Առաքելեանն[14] վասն գովելի գործոց նորին, զորս ի կաղէթ զանազան ազգաց ընթերցան աստ իշխանքն ամենեքեան, և գովեցին զնովաւ զազգս մեր։ Որում օրհնութիւն մատուցանես յինեն ընդ ամենայն իշխանաց և հասարակ ժողովրդոց և բարեկամաց քոց։

Յատուկ օրհնութիւն տամ սիրական որդւոյն քում՝ Արշակայ[15]։ Եւ լուեալ էի, որ Վաղարշակ որդի ևս գոյ քեզ, զայնմանէ ոչինչ գրես։ Զոր ինչ աստէն յառաջարացի, և ես գրեցից քեզ։ Իմ գիրս առ Շամիրամ աղայն[16] առաքեմ միշտ։ Վեց ամսէ վեց ամիս միշտ գիր ընկալնում ի նմանէ։

Աստ ի Պետրբուրգ ինձ վաքիլ եմ կարգեալ ազնիւ պարոն Փիլիպպոս Մանիկչարեանն[17], որ ի Հնդկաց որ ինչ գիր և բան առ նա եկեսցէ, ուր և իցեմ մեզ հասուսցէ։ Այսպէս առնէ զգիրս Շամիրամ աղայի։ Դու ևս ըստ այսմ կարես առնել։

Խաղաղութեան դէռ նշոյլ չկայ։ Բասան[18] խալբալ է, զի ընդէմ է սոցա, ուր եզերիլն գրեցից։ Մեք լինելոց եմք ընդ զօրս սոցա ընդ մեծ իշխանին։ Եւ այլն, յանձնելով զձեզ ի շնորհն աստուծոյ։